

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

02 հուլիսի, 2020 N 34

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և հրամանագրի հավելվածի 27-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից 2020 թվականի հուլիսի 2-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝ **ո Ր Ո Ղ ՈՒ Մ Ե Մ**.

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

1) «Տեխնոթրայդ» ՍՊԸ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 43 (ՀՎՀՀ 90017763).

2) Ա/Ձ «Արմեն Գրիգորյան», ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի 5/40 (ՀՎՀՀ 30757361).

3) «Կապիտալ» ՓԲԸ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի 14/33 (ՀՎՀՀ 90017182)

4) Ա/Ձ «Դավթյան Անժեղիկա Արամայիսի», ք. Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի 17 (ՀՎՀՀ 90469659).

5) «Արեգակ պլյուս» ՍՊԸ, ք. Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի 12/25 (ՀՎՀՀ 90343231).


6) «Անի Մարկետ» ՍՊԸ, ք. Ստեփանակերտ, Հեքիմյան 7/135 (ՀՎՀՀ 90042717):

2. ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ